I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՄԵԾ ԸՆԴ ՄՈՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «Օրենք»), այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

- Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝
- Հայերեն՝ «ՄԵԾ ԸՆԴ ՄՈՐ» փակ բաժնետիրական ընկերություն
- Անգլերեն՝ "METS AND MOR" Closed Joint Stock Company
- Ռուսերեն՝ закрытое акционерное общество «МЕЦ ЭНД МОР»

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

- Հայերեն՝ «ՄԵԾ ԸՆԴ ՄՈՐ» ՓԲԸ
- Անգլերեն՝ "METS AND MOR" CJSC
- Ռուսերեն՝ ЗАО «МЕЦ ЭНД МОР»

1.3. Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, 1 թաղամաս վարչական կենտրոն 1/3:

1.4. Ընկերությունը ստեղծվում է անժամկետ:

1.5. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

2.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **273 000 ՀՀ դրամ**, որը բաժանված **է 27 300 հատ** հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է **10 (տասը)** ՀՀ դրամ:

2.2. Բոլոր **27 300** բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի (բաժնետիրոջ) միջև և լրիվ վճարված են նրանց (նրա) կողմից:

2.3. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

2.4. Ընկերությունն իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել նաև արտոնյալ բաժնետոմսեր, որոնց ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի 25 (քսանհինգ) տոկոսը:
III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ
3.1. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատերն Օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
(ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
(բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.
(գ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
(դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.
(ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.
(զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
(է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
(ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
(թ) դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
(ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը
(ժա) ունենալ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
3.2. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:
3.3. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել Ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:
3.4. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:
IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1.Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):
4.2.Շահութաբաժինների, այդ թվում եռամսյակային կամ կիսամյակային, վճարման, շահութաբաժնի չափի, վճարման ձևի և ժամկետների մասին որոշումն ընդունում է Ժողովը:
4.3.Տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին առաջարկությունների պատրաստման և ներկայացման լիազորությունը դրվում է Տնօրենի վրա:
4.4.Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում, իսկ եթե սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի չափ, ապա վճարվում է տարեկան և արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությունը:
4.5.Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության տնօրենը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
5.1.Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է (այսուհետ՝ «Ժողով»): Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:
5.2. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
5.3. Ընկերության Ժողովի իրավասությանն են պատկանում՝ (ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ռազմավարության և տեսլականի որոշումը. (բ) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ. (գ) Ընկերության վերակազմակերպումը. (դ) Ընկերության լուծարումը. (ե) Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը. (զ) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, Ընկերության հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը. (է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

(ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

(թ) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

(ժ) Ընկերությանը պատկանող գույքի շուկայական արժեքի որոշումը, դրա հաստատումը.

(ժա) Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

(ժբ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը.

(ժգ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի և նրա վճարման չափի հաստատումը.

(ժդ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի որոշումը.

(ժե) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

(ժզ) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ը գերազանցող, Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման խոշոր գործարքների, ինչպես նաև շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

(ժէ) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

(ժը) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

(ժթ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

(ի) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

(իա) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

(իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

(իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

(իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

(իե) Օրենքով նախատեսված Ժողովի, ինչպես նաև Օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի լուծման իրավասությունը:

5.4. Ընկերության բաժնետերերը գրավոր (գրանցված փոստով և/կամ էլեկտրոնային փոստով և/կամ azdarar.am կայքում ծանուցման միջոցով) ծանուցվում են Ժողովի գումարման մասին Ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ: Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

(ա) Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.

(բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

(գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

(դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

(ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
5.5. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը:
5.6. Քվորումի բացակայության դեպքում գումարվում է նոր ժողով, որի օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Նոր ժողովի գումարման մասին ծանուցումն Ընկերության բաժնետերերին ուղարկվում է նոր ժողովի գումարման օրվանից առնվազն 20 օր առաջ՝ գրանցված փոստով և էլեկտրոնային փոստով: Նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը:
5.7. Տարեկան Ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝ (ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը. (բ) Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգողի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը. (գ) կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:
5.8. Ժողովի որոշումներն ընդունվում են Ընկերության ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով կամ սույն կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ կամ միաձայնության պահանջ սահմանված չէ:
5.9. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով, բացառությամբ տարեկան ժողովի կամ այն արտահերթ ժողովի, որը հրավիրվում է տարեկան ժողովի տեղի չունենալու հետևանքով և բացառապես տարեկան ժողովին վերապահված կամ Ընկերության լուծարման հարցերի շուրջ որոշման կայացման համար: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:
5.10. Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության Տնօրենի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք տվող սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
5.11. Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը սահմանվում է Տնօրենի որոշմամբ, և կախված այդ ձևի ընտրությունից, արտահերթ ժողովը գումարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:
5.12. Ընկերության Տնօրենը պարտավոր է արտահերթ ընդհանուր ժողովի գումարման կամ արտահերթ ընդհանուր ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կայացնել վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10% ձայնի

իրավունք տրվող սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից 10 օրվա ընթացքում:
5.13. Ընկերության Տնօրենը իրավունք ունի մերժել արտահերթ Ընդհանուր ժողովի գումարումը միայն այն դեպքում, եթե՝ (ա) խախտվել է Օրենքով սահմանված արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացնելու կարգը. (բ) արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում Ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք տվող սովորական բաժնետոմսերը. (գ) արտահերթ ժողովի օրակարգի հարցերից ոչ մեկը չի վերաբերում Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովի իրավասությանը. (դ) ժողովի օրակարգում ընդգրկելու համար առաջարկված հարցը չի համապատասխանում Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:
5.14. Սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով Ընկերության ժողովները Տնօրենի կողմից չգումարվելու դեպքում այդպիսի ժողովը կարող է գումարվել Ընկերության վերստուգողի, աուդիտն իրականացնող անձի կամ ժողովը հրավիրելու պահի դրությամբ Ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք տվող սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից:
5.15. ժողովի արձանագրությունը կազմվում է դրա փակումից հետո հինգ օրվա ընթացքում առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:
5.16. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության Տնօրենը:
5.17. Տնօրենը՝ (ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից. (բ) գումարում է Ընկերության տարեկան և արտահերթ ժողովները. (գ) հաստատում է ժողովների օրակարգը. (դ) հաստատում է ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսն ու ամսաթիվը, ինչպես նաև իրականացնում է այն բոլոր հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ. (ե) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում. (զ) գործում է առանց լիազորագրի. (է) տալիս է լիազորագրեր. (ը) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային. (թ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը. (ժ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին. (ժա) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

(ժբ) իրականացնում է Օրենքով նախատեսված այլ իրավասություններ:
5.18. Ընկերության տնօրենը կարող է կնքել միայն այնպիսի գործարքներ, որոնք չեն գերազանցում Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը կամ այլ կերպ չեն հանդիսանում խոշոր կամ շահագրգռվածության առկայությամբ գործարքներ սույն կանոնադրության կամ Օրենքի իմաստով:
5.19. Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում:
5.20. Ընկերության տնօրենների խորհրդի բոլոր իրավասությունները իրականացվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բացառությամբ սույն կանոնադրությամբ հատուկ սահմանված դեպքերի:
VI. ԽՈՇՈՐ ԵՎ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ
6.1. Օրենքով նախատեսված դեպքերում խոշոր և/կամ շահագրգռվածությամբ գործարքները կնքում են Ժողովի հաստատմամբ:
6.2. Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը ենթակա է գնահատման Օրենքով սահմանված կարգով:
VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ
7.1. Ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է Ժողովի որոշմամբ:
7.2. Ընկերության վերակազմակերպման և լուծարման հիմքերն ու կարգը սահմանվում են Օրենքով:
7.3. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից:
VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ
8.1. Սույն կանոնադրությունը այլ (երրորդ) անձանց համար ուժի մեջ է մտնում դրա պետական գրանցման պահից: